

ՊԵՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ հասկար	12 Տր
Տարեկան	6 "
Վեցամսեայ	6 "
Արսասահմանի հասկար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Աստիկայի հասկար	3 սգր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	1.50 "

Մանուգրան տղր առաջին երեսին հատար 40 ս. իսկ վերջին երեսին հատար 20 սակրիս կ. երեսին աւելի անգումներու հատար 20 0/0 գեղղիզիայ:

Վառնայի հատար մի քի 40 սակրիս

ՉԱՐՄԻՆ

ՄԱՐԿԻ ԱՅՊԱՏԻՆԻ ԲԱՂԱՅԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՊՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՆԻՐԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԻՐԸ

Նախկին և յիստ զրկե հարաբերութիւնս հասցիս:

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Cherjourn“ Varna (Bulgarie)

Արսասահմանի հատար մեքի (20 ՍԱՆԹԻՄ) Պուշկարիոյ հատար մեքի (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՉԱՐՄԻՆԻ ԲԱՂԱՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՏՔ ԵՒ ԿԱՆԵՐԿ ՎՃԱՐԷ

ՎԱՐՆԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի օրը, վաղ առաւօտից սկսած, ժողովուրդը հաւաքովում էր եկեղեցու բակը Սօֆիա զրկը վեղիք պատգամաւորին ընտրելու համար: Վերջապէս մինչեւ ժամը ինը եկեղեցու բակը լցվեցին և այնպիսի տիպեր, որոնք իրենց կեանքում գուցէ եկեղեցու բակը ոտք չեն դրած:

Ամբոխի ընտրող մասը լարված վիճակի մէջ էր գտնվում: Ընտրողները երկու մասի էին բաժնւրված. մէկը քէն պէտք է տար Պ. Պ. Յ. Մավեանին, միւսը Սարգիս Գարբիէլեանին: Պրաւունքը ամբողջ երեք տարիների ընթացքում անընդհատ կերպով աշխատել էր թեկնածուներից մէկի՝ Պ. Գարբիէլեանի վարկը կտրել ժողովրդեան աչքում իրեն յատուկ լրբութեամբ ամեն միջոց գործ գնելով այդ նպատակին հասնելու համար: Իսկ ընտրութեան նախընթաց օրերում Գուրպէթեանը այլևս չափը անցրել էր, յուսալով որ այդ բուտոր միջոցներով պէտք է կարողանար ժողովրդի վրա ազդել: Նա այնքան էր հետաքրքրված Սարգիս Գարբիէլեանին սեւացընելու խնդրով, որ պարզ ընտրողական խնդիրը իր թերթում ճակատագրական էր հռչակում, կարծես թէ Հայաստանի իշխան ընտրելիս լինելիք ու իր հետեւողներին աւետում որ կիրակի օրը հիկեղեցու զանգակները պիտի զղանան Պարբիէլեանի բարոյական մահը:

Դժբաղդաբար, աւելի ճիշտը բարեբախտաբար, ընտրութիւնը կատարվեց և եթէ ոչ եկեղեցու զանգակները, գոնէ ընտրողների 220 քէն հայ հասարակութեան յայտարարեցին որ այդ օրը չեն չեց ու թւաբանական միջոցով հաստատվեց Գուրպէթեանի բարոյական մահը, նրա իբրև հայ սնհատ և հրապարակագիր զերօ լինելը, գոնէ Վառնայի մէջ, որը մեզ վաղուց յայտնի էր:

Բարեբախտաբար ենք ատում ոչ թէ նրա համար, որ Գուրպէթեանով ենք հետաքրքրվում. այլ նրա, որ այն ժողովուրդը, կամ հասարակութիւնը, որի վրա Գուրպէթեանի պէս տիպերը կարող են ազդեցութիւն ունենալ բարոյական ու մտաւոր անկման գերազրոյական ատիճանին պէտք է հասած լինին: Այս Վառնայի հայ հասարակութեան խոշոր մասը, որ իր մէջ պարփակում է Վառնայի հայութեան բարոյական ու խոհուն մասը, Գուրպէթեանին և իր նմաններին ցոյց տեց իրենց արժանաւոր սեղը 220 քուէով յայտարարելով որ Գուրպէթեանի և իր թերթի բարեաշխարհները ազդեցութիւն չեն գործում այն խաւերում, ուր պէտք չէ որ ազդեն:

Դժբախտ գտնվեց Պ. Մավեանը. գոնէ 200 քէ պէտք է բուտանար. բայց շնորհիւ իրեն պաշտպան հանդիսացողներին, միայն և միայն 55 քէ ընդունեց. և դեռ ընտրութեան սկզբներում Մավեանի կողմնակիցները տեսնելով որ իրենց թեկնածուն չը պիտի ընտրվի, յարմար գատեցին օյնեքազութեան գիմնը, այսինքն չոչակել որ իրենք քէ չը պէտք է տան, որովհետեւ կարգը պահպանելու համար ուստիկանութիւն է հրաւիրված եղել: Սակայն վերջը զղջացին իրենց այդ յիմար քայլի վրա. որովհետեւ իրենց թեկնածուին արժանացրին միայն 55 քէ էր և այն էլ այնպիսի մի անձի հանդէպ, որին ամիսներով ուզում էին ճիւաղ ներկայացնել: Պ. Մավեանի կողմնակիցները արջի ծառայութիւն մատուցին իրենց թեկնածուին, տեղի տալով որ գրականապէս հաստատվի թէ Սարգիս Գարբիէլեան իբրև հանրային մարդ աւելի է գնահատվում, քան Մավեանը իր բոլոր մասնաւոր արժանաւորութիւններով հանգեցրած:

Յօդածիս սուղին մատում աւացինք որ ընտրողները լար-

ված էին: Այդ օրը մեծ պէտք էր պէտք է տեղի ունենային, եթէ ուստիկանութիւնը չը լինէր: Բարեբախտութիւնը օգոստոս 17ի ընտրութեան միջոցին պատահած խռովութիւնների՝ տուփի վրա տեղի ունեցած յարձակման և տետրակ պատռելու մասին լուր առնելով, Թաղական Խորհրդից բացատրութիւն է պահանջում և յայտարարում է որ 21ի ընտրութեանը, այդ տեսակ անկարգութիւնների առջեւ առնելու համար, անպատճառ ուստիկանութիւն պէտք է զրկվի. ու բացի դրանից, ընտրութեան պէտք է մասնակցեն միայն Բուրգարապատակ հայերը, որովհետեւ կառավարութիւնը բոլորովին տրամադիր չէ զլիսացաւանքի մէջ մտնել օտարապատակների պատճառով: Թաղականութիւնը և վարդապետը կրկնակի գիմնամներով ու բացատրութիւններով վերջապէս կարողանում են քաղաքապետին համոզել որ ընտրութիւնը եկեղեցական պաշտօնային համար է և ամեն Վառնայաբնակ հայ իրաւունք ունի մասնակցելու և այդ ձևով ընտրութիւններ կատարվել են ամբողջ Բուրգարիայում:

Այդպիսով յաջողվեց գաղթական հայերի քէս րկութեան իրաւունքը վերկել, իսկ ուստիկանութիւնը զրկվեց:

Ուստիկանները իրենց կարգը պահելու պաշտօնից զուրս ոչ մի բանի չը խառնվեցին ու ամենը, առանց հպատակութեան խտրութեան, մասնակցեցին ընտրութեան: Ժամի 10ին պիտատոր Գուրպէթեանը հասաւ ընտրութեան վայրը և ուստիկանութեան ներկայութիւնը տեսնելով, իր առաջին գործը համարեց մօտենալ քէս րկութեան սենեակի դրան ու նախատել վարդապետին իրեն յատուկ լրբութեամբ, վարդապետը բարութիւնը ունեցաւ այդ պարունին չը յանձնել ուստիկանութեան որ յանդգնում էր նրան նախատել իր պաշտօնը

կատարած միջոցին:

Այլևս յուսահատված Գուրպէթը կրկին թուրքի փնտոցեց, մի բուրգարի պատրաստեց և մտաւ ամբոխի մէջ ու ընտրութեան անկանոնութեան համար ստորագրութիւն հաւաքեց: Բուրգարի վրա կան 139 ստորագրութիւններ, որի մեծ մասը կեղծ անշարժաւ և բացակայ անձեր են և որոնցից երկուսը Գուրպէթի գրաշար տղաները են:

Եւ այս 139 հոգուց միայն 50 իրաւունք ունէին բուրգարի եթէ իսկապէս բուրգարի առիթ կար. բայց դրանք էլ կամովին չեն տուր քէն, գոնէ առեքելութեամբ, ամբոխի աչքում, իրենց անկումը փրկելու համար: Իսկապէս շարժատանական միջոց, որ միայն Գուրպէթեանի նման թրքական փաստաբաններին յատուկ է:

Բուրգարի առարկութիւններից մէկն էլ իբր թէ այն է, որ ընտրողական ժողովի մի քանի անդամները հրաժարական են տուել. բայց սխալ է, որովհետեւ այդ պարունները անդամներ չէին, այլ օժանդակներ. միայն վարդապետի բարի տրամադրութեամբ հրաւիրված և որոնք առանց ստուգելու, ուրիշների զրկումով, քէս րկութեան սկսվելուց մի քանի քամու կէս յիտոյ հրաժարվում են իրենց օժ. պաշտօնից, յաւակնութիւնը ունենալով որ ժողովուրդը, հսկակաւ ընտրական ժողովը և նախագահը պէտք է զիջանին աղայական այդ անուսկաւ քայլին և ընտրութիւնը յետաձգեն:

Ընտրութիւնը կատարվեց շատ կանոնաւոր կերպով, առանց ունէ ալմուկի ու ամենայն օրինաւորութեամբ: Մասնակցեցին հարիւրաւոր մարդիկ որ Վարնայի մէջ երբեք տեղի չէր ունեցել:

Բայց Գուրպէթեան և իր նրամանները կրկին գոհ չեն, որովհետեւ իրենց գոհակի և յիմար պահանջներին բուտարութիւն

չը տրվեց և ստոր հաշիւները խորտակվեցին :

Հիմա շախմատում, բարոյապէս յայլածարկած Գուրպէթը ուզում է ինչ որ հանրագրութիւն պատրաստել փողոցէ փողոց, տունէ տուն ընկնելով պատահած երեխային ստորագրել տալով, որպէս զի կարենայ իր անկումը պարսկել. բայց իզուր ջանք : Գործը վերջացած է. Վարնայի պատգամաւորը ընտրված է, ձայները անսպասելի մեծամասնութեամբ :

Յօդուածը վերջացնելով աւելորդ չենք համարում յայտարարել որ արժանապատիւ նախագահ Պատրիարքական փոխանորդը իր պաշտօնը կատարեց ամենայն աշխրջութեամբ. կորովով ու սակտով : առանց ենթարկվելու զանազան սպառնալիքներին և ինտրիգներին ազդեցութեան :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Հարստան 2 Մեպտեմբեր 1903 Մարտիսս

Թեմական տեսչի հարցը նոր չէ Սալմաստի համար. արդէն մի ժամանակ եղել է թեմական տեսուչ, այնուհետեւ էլ աշխատել, խօսել ևն այդ մասին, բայց մինչև այժմ լոկ խօսք ու ցանկութիւն էլ մնացել էր : Սակայն այսօր շնորհիւ թեմակալ առաջնորդ Մուրատեան հայրսուրբի նորից արժարձեւել է թեմական տեսչի հարցը և արդէն նշանակուել, բայց գիտէ՞ք ընթերցող, ո՞վ չը զարմանաք ես ձեզ կասեմ, Մուրատեան հայրսուրբը վաղմի բարեկամ տեղիս դատաւորը — Մարտիրոսը — Սըրանով Հայրսուրբը հաստատում է իւր անցեալ սեպտեմբերի բարեկամական խօսքերը. «Ես որչափ առաջնորդ կը լինիմ Սարպատականում, դուք գատաւոր կը լինէք Սալմաստում» :

Անշուշտ զարմանալի չէ այս երեւոյթը «Մարտիրոս» ընթերցողներին, եթէ նոքա յիշեն անցեալ տարուայ Մուրատեան հայրսուրբի տուած տուգանքները դատաւորին, հայ ժողովրդից վերցրած, որը մանրամասն հրատարակուեցաւ իր ժամանակին : Յաւ ի սիրտ գալիս ենք արձանա-

գրելու այստեղ մի տխուր, շատ տխուր իրողութիւն : Մեր տառապանքի ու ընդվզումի այս օրերում, երբ հայ ժողովուրդը երկրում այն տառապեալ դրութեան մէջ է, երբ կովկաս այդ փոթորիկում վիճակն ունի և երբ Պարսկաստանն է մնում միայն մեզ, ուր պէտք է մեծ թափով, եռանդով գործել, գալիս է հայ վարդապետը Սարպատի արտահանումը և դուրս քշել այն ուսուցիչներին, որոնք վարձուած են նոյն իսկ զիւղազիններից, բայց ինքը չի հաստատած : Մենք գլխականապէս կասեմք, որ Մուրատեան վարդապետը կուզում է Դաշնակցութեան դէմ և չէ կամենում, որ Սալմաստում Դաշնակցական ուսուցիչ լինի : Այդ պարզ լինելուց յետոյ մենք կարճաձգութեամբ մի այլ զգուշացի իրականութիւն : Մուրատեան հայրսուրբը անցեալ տարի, երբ Սալմաստ էր գտնուում Պ...ին ուսուցիչ է նշանակում Սարպատի գիւղի համար, այն էլ զօրով և սպառնալով զիւղազիններին : Այդ պարտը ամբողջ տարուան ընթացքում ոչ միայն բան չէ սովորեցնում աշակերտ-աշակերտուհիներին, այլ և վերջիններից մէկին բռնաբարւում... Ժողովուրդը բողոքում է թարիք առաջնորդին, բայց նա քայլի չը լսելուց, նոյն պարտին յենձնարարականով ուղարկում է միեւալ գիւղը : Այս էլ աւելացնենք, որ այժմ ժողովուրդը բոլորովին զգուշացած է ուսուցիչներից և ուսուցչից, բայց այդ պարտը համարձակում է մնալ այստեղ, առարկելով որ ես Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչ եմ :

Եթէ Մուրատեան հայրսուրբը հակառակ չէ յեզրափոխութեան, մասնաւորապէս Դաշնակցութեան, ինչու՞ համար նա չի կարողացած փակել Հաւթուտում գոյութիւն ու նեցող մի խաղճայնան դպրոց, որը նոյն իսկ շարունակում էր ամառուայ այս երեք ամսուայ ընթացքում և նմանապէս նրա փոխանորդն անգամ ոչ չուներցաւ : Թող Մուրատեան հայրսուրբը լաւ բաց անէ իւր աչքերը, թող մէկ կողմ դնէ իւր ժամուն ու փառասիրութիւնը, այժմ որիչ բանի ժամանակ չէ, թող օգտուի հանգամանքից... :

Գնտարցի

Գիտնալու էք անշուշտ որ քաղաքիս հայ ազգային վիճակը՝ միմիարական չէ երբէք : Ազգ. ղեկավար մարմնայ հակառակ կուսակցութիւնը աճապարած է անտեղի ցոյց մը ընել հոգաբարձութեան դէմ. գաղթական հայեր մասնակցած են սոյն ցոյցի : Աստուածածնայ կիրակէին պատարագի եւ խաղողընէքի արարողութիւնը հազիւ լրացած, առանց գիտութեան թաղ. խորհրդոյ հակառակ կուսակցութեան պես Տ. Մ. Իվանոօկու առեւտրաւորութիւն մը կսկսի, նոյն միջոցին երբ խօսքը կուղայ Դանիէլ Եօաքիմիւսբոյսի վրայ, ժողովուրդը պատրաստուած «գորս գողը» գողում գողումներով կը յարձակին Դանիէլի վրայ եւ զիրար չճանչնալու աստիճան : Ընդ մըն է կսկսի թէեւ պարտն հոգաբարձուի երկու հղաբար կուգէին օգնութեան հասնիլ իրենց եղբոր բայց անկախելի էր, կուսակցութեան վիճար անդառնալի էր որ տուած էր քանի մը օրեր առաջ (չըսեմ քանի մը շաբաթ) :

Ճշմարիտ չէ ինչ որ թերթերու մէջ հրատարակուեցան թէ եկեղեցւոյ մէջ ժողովի կերպարաւօք հաւաքուած էին, առեւտրաւորութեամբ սկսեց այդ ժողովի բացումը և որոշուեցաւ յանձնաժողով մը որ մինչ ի նոր ընտրութիւն վարեն ազգային գործերն ևն ևն. ստոնք ամէննայ ստու են. եկեղեցւոյ մէջ ոչինչ որոշուած չէ, միայն եկած էին որ, գլխաւորապէս պր. Եօաքիմիւսբոյս ձեռնով եկեղեցիէն դուրս հանէին և այսու աստիճան եւ վերջին սարսափ մը ազդելով անոր որ քաջուի հոգաբարձուի պաշտօնէն, բայց հակառակը եղաւ, պիտի շարունակէ պաշտօնը ցնոր ընտրութիւնը. անտեղի էր նաեւ եկեղեցւոյ բանալիները կատարութեան յանձնել՝ որպէսզի կուսակցական հակողութեան տակ կատարուի ամէն ինչ. այս ալ անյաջող ելաւ, բանալիները հետեւեալ առաւօտուն դալձուցին հոգաբարձութեան Ա. երդոց չէ իվեր հանել թէ Մ. Իվանոօկու կուսակցութեան մեր եկեղեցւոյ կալուածներն յանձնել կատարութեան որ բուժական միապետութեան տակ անոր սահմանադրութեան տրամադրութեան համաձայն պարող Նու ազատ ժողովրդի վրդի մը, հայուն, պատիւ չի բերեր ոչ թէ միայն մտածել զայս այլ խօսիլն ալ ոճիր մըն է քանի որ օրօման սահմանադրութիւն ազատ ա-

պարէզ կը բաւայ հայ-բոմբեակներուն կատարել ազգի կալուածները ազգ. հոգաբարձութեան ձեռքով. եթէ հոգաբարձութիւնը չեն պարտաճանաչ, եթէ նոքա ապարդիւն անձինք են, եթէ վեջլապէս դոքա կասկածելի են, ընտրել ուրիշներ, արդիւնաւոր ու պարտաճանաչը. բայց ոչ տեղական իշխանութեան յանձնել եկեղեցապատկան կալուածոց կատարութիւնը :

Գիտնալ պէտք է որ բոմբական եկեղ. կալուածոց տնօրինութիւն մը կայ մասնաւոր եւ զիտու ըլլած են Տ. Մ. Իվանոօկու եւ նորա համակիրք առ նոյն տեսչութեան ստանձնելի սալու եւ մեր ազգ. կալուածներն. հոգաբարձութիւնը նախարարութեան ընդդիմացած է նոյնիսկ նախարարին պնդման եւ ի դատ հրաւիրելու սպառնացած եւ վերջապէս անյաջող ելած է կատարութիւնը :

Ընդգրկմադի կուսակցութիւն բարեքաւ է տեղ.ոյս քահանայից դէմ ալ, թէ անոնք պատարագի կիսուրպէս թէ ըսած ըլլան, պատահեցաւ եկեղեցւոյ մէջ խառնակութիւն, քահանայք պատարագի եւ խաղող օրհնէնքի արարողութեան վեջլ. նոյն օրուան՝ Բօրգարեան ընտանեաց նշնկցելոց համար հոգեհանգիստը պիտի կատարէին ըստ սովորութեան ինչպէս եւ զարձեւ ըստ սովորութեան տաղաւար օրերու մասունքը, սոյն պաշտօն կատարուած ըլլալու քահանայք լսեր են թէ, չտակալին պաշտօննիս լինուցած չէինք ըսեր են բոմբակներէն. գիտել հարկ է սակայն. սոյն բառը միայն պատարագի արարողութիւն կը նշանակէ թէ, ամէն արարողութիւն եկեղեցւոյ մէջ կը կատարուին աստուածային, երկնաւոր կը կոչուին :

Ինչպէս է թէ կուսակցութիւն մը իր հակառակորդին անյաջող հանելու համար ամէն ջանք ի գործ պէտք է դնէ իրաւունք մը չհանելու համար, ըստ այսմ եւ տեղ.ոյս կուսակցութիւնը. բայց ցաւային այն է թէ զաղթական հայեր խառնուած են գործին մէջ, որք հարկ անհրաժեշտ էր չեզոք դիրք մը բռնէին. կը Լաստին սակայն որ ցարդ զաղթականաց միջամտութիւնը արդարացնող կարճատեսներ անկիւնարարութիւններէ չեն գողորդի և այսու տեղական իշխանութիւնք խիտ հակողութեան ներքեւ առած են զիրենք : Սոյն պահուս մակեղանական հար-

ՓՃԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

(9) ՆՈՒՆԻ Ս. Չ. — ԻՆ ԳԼՈՒՆ Բ.

Միւս օրը, առաւօտեան ժամը տասին, Սարգիսի թաղի նկուղանման խրճիթներին մէկի դռնից դուրս բերեցին զաղթական ձերուհի Գեոյի աղայի դագաղը : Դագաղին հետեւում էր մի ձերուհի քահանայ, կրկու տիրացու, Շուտեանը, Պետրոսը և հինգ վեց հոգի հայաստանցի համալներ : Ծերուհի Գեոն աչքերը հեռացնել չէր կարողանում իր միմուճար աղայի քարացած դէմքից. արցունքի խոշոր կաթիլները սահում էին նրա խիտ, բայց արծաթած յոնքերի տակը տեղաւորված խոռոչներից : Աչքերը չէ-

ին երեւում, որովհետեւ կոպերը զըրեթէ ծածկված էին բոլորովին : Ծերուհի քահանայն երգում էր մեռելական ախուր երգերը. ու գանդաղօրէն առիջ զնում. մեռելին հետեւողները լուս են, երբեմն միայն Շուտեանն ու Պետրոսը իրարու հետ մի երկու խօսք են փոխանակում :

Ծերուհի Գեոն լայիս է ու մտածում : Ահա նա գիւղումն է. նրան պատկերանում է իր կեանքը՝ 20 տարի առաջ. իր մեծ կալի մէջ ուրախ ուրախ ցորեն են կայտում : Հիմա դագաղում պատկած Գրգօն, այն ժամանակը չորս տարեկան կայտած, կարմիր թշնմով, խաղաղու աչքերով, սեւ խոպոպիկներով մի կրակուրոց տղեկ, շարունակ բարձրանում է կամի վրա, եզան պոչից բռնում, քաշում. կըր ցնցում է, ոտով խփում և Գրգօնը զորում յարդի մէջ : Չա-

րածընին կրկին ոտքի է կանգնում, վազում ու նետվում կամի վրա՝ իր վրէժը եղից լուծում կակուղ ճկպտի հարւածներով :

Մտածում է Գեոն, իսկ մեռելագնածքը տաղ է անցնում. արդէն հասել են Հաւթուրի գաւթվայրի տակը : Դագաղը վայր են դնում. քահանայն կարողում է :

Բայց Գեոն նոյն վիճակի մէջ է. աչքերը կրկին միամ էր սիրտունը զաւկի մարմարացած դէմքին. նա չի հասկնում քահանայի կարողացածը : Կրկին վերցնում են դագաղը և շարունակում գնալ : Մտադրած, նպարակաճառ, գինեկաճառ բարեբաշտ կինսօ. ները խաչակնքում են զլխարկները վերցնելով ու զարմացմամբ նկատելով հայաւատենցիներին ընկերացած Շուտեանին ու Պետրոսին, իրենք էլ միանում են թափօրին և մի քիչ տեղ

զնալով պատուում մեռելին : Ծերուհի Գեոն կրկին ա՛րփովում է իր մէջ. նա կրկին իր գիւղումն է. երեսակայտութեամբ. Գրգօն 18 տարեկան աղայ է դարձել. նրա քթի տակը հազիւ սեւացել է. բայց նա գիւղումն աւաւ երկուստարներից մէկն է իր զեղեկութեամբ, հարստութիւնով, ճարպկութիւնով և խելքով : Հրաշալի ձայն էլ ունի. նա մինչև անգամ սիրահարվել է գիւղի ամենախոն և աղվայ Գուրի վրա. ամառը, լուսնակ գիւղերին, կալը պահպանած միջոցին զէկի տակը նստած երգում է :

— «Կայներ ես էգին, խաղող կուքաղես : չամած ծրծրով շաք ը կու մազես. արմատ դանակով իմ սիրտ կու ծակես : արի ևար, արի, խաղով մի մնար

ցին պատճառաւ չէր բաւեր օտարա-
կապատկաց սեղմումը որ ամբողջ Բո-
մանիոյ մէջ կը գործադրուի քաղա-
քիս հայ գաղութին միայն յօսան-
հայոց սրբ. գործոց միջամտել կը
պակսէր. կառավարութեան վրայ
լաւ տպաւորութիւն թողած չէ
օտարահասակաց անցագրերու կրակ
մը բռնկած է — յունեցողները արքա-
րելու գործադրութեամբ :

(Շարունակելի)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Պոլսկարիոյ ապագայ Առաջնոր-
դական ընկնածու Տ. Ներսիս Աս-
րունեան Սրբազանի

(Շար. նախորդ թիւէն)

Քաղաքամէջի Եօթն եկեղեցիները,
որոնց բաժան է առանձինն թաղ-
խորհուրդներով կառավարուելուն մէջ
Միջազգայնական Առաջնորդ այդ հրէջը
չաճ ունէր, սրբազանը միացուց,
հերթով պաշտօնավար կառնաւոր
եւ հանդիսաւոր կատարելու համար
չարթէ շարքով : Վանքերը, որոնցմէ
կարմրեղէն հայի սպասել անվա-
տահութիւն կինթաղէր Փափամաճ-
եան Փանոսի վրայ, Վարազին մի-
ջամտել՝ Աղտանեանն ու Արթաշ-
եանը ամբաստանել էր, սկսան տա-
կաւ խիստ հակողութեան տակ մտնել
եւ մտաւորականին հետ կանոնաւոր
խնամքն ալ անխնայ ու իրատար
ջամտեցաւ որբերուն, որք պատու-
պարուած էին անոնց մէջ : Վերջին
ղէպերէն 20-30 զիւղբու եկեղեցի-
ները քարուքանդ եղած՝ այրուած է-
ին, Պատրիարքարանէն շատ ուղտած
եւ քիչ եկած գումարով մը, որուն
պակասը գիւղացուց շահաբեր օժան-
դակութեամբ լեցունելը տրուեցաւ,
կառուցուեցան ոչ միայն յիշատակ-
եայ եկեղեցիներն ալ եւ պզտիկ խո-
նարողութեամբ եւ մէկ ձեռքով յա-
րակից այրեացաւեր վարժարաններն
կամ չեղած սեղերու մէջ բացուելիք
վարժարանները, որոնց ուսուցիչ-
ներն ալ կարգուելու համար պայ-
մաններ կնքեց զիւղացուց ու նպաս-
տից յանձնաժողովի միջեւ :

Այս կրթական ու եկեղեցական
բարեկարգութիւնները կատարուած
ստեն, հողերու մարտ կը մղուէր
հռովմէական ու բողոքական դաւա-
նութեանց զէմ, ամէն շարժու կար-
գաւ Քաղաքամէջի Այգեստանի կամ

մտաւոր վանքերու ո՛ր է է տաճա-
րին մէջ յարողելով անսասական՝
դաւանական եկեղեցական, ազգա-
գին նիթերու վրայ եւ հանդիսաւոր-
ութիւնը քարոզութեանց, ամե-
նէն ապուշին անգամ ան մը կը գոչ-
նէր, կազաէր, կարթնցնէր : Տր-
մէյնոյցի դէմ քարոզութիւնները
րաժ ստեն՝ մարդասիրական զգա-
ցունելուն ալ անոր մէջ գտնել ուղե-
լով կը գովէր երեսին զոր բաւական
գործակից ըրաւ ընդդէմ հռովմէ-
ականութեան իրենց նիթական պայ-
քարին մէջ ձկուէն, դիւանադէտ ու
վարչագէտ, յաջողեցաւ նոյն իսկ կը-
րօնի դաս աւանդել տալ հայ քահա-
նայի մը, նոյն ինքն Տր. Ռէյնոյցի
վարած ամերիկեան բարձրագոյն
վարժարանին ու յարակից որբանո-
ցին մէջ, հիւսուողին նպաստակը զուտ
բարեգործական ու մարդասիրական
սանձերի մէջ փակելով : Մէկէ աւե-
լի անգամեր տեղւոյն ժողովարանին
մէջ դպրոցական հանդէսներու նա-
խագահելով զիւր աստօթական օրհ-
նութիւնները (ըստ որ, Ռէյնոյցի
բացատրութեան) տալու հրաւրուե-
ցաւ շրջանաւարաններու եւ սպանա-
նիչը վայելող տղաք մտնեցան ի հոս-
քայր Ս. Աղոյն նորին գերապատու-
թեան :

Քիւրտերու հարստահարութիւնը
միշտ զբողոքուցած էր առաջնորդա-
րանը եւ տեղական կառավարութիւ-
նը : Եւ սակայն արդար ըլլանք իբր
պատմական մի ճշմարտութիւն ար-
ձանագրելու հոս թէ ինչպէս հոսմէ-
ական ու բողոքական մարդասու-
թիւնը նոյնպէս եւ աւելի քրդական
հարստահարութիւնը մեր մեծ աղա-
ներու գործակցութեամբ, սարքա-
նօք եւ եղբայրացաւ վրիժառու-
թեամբ կը լինէր զուտ իւր, եւ ինչպէս
Փարսամաճեան Պետրոս կաթողիկոս-
թիւնը լռելեայն կարծածէր որպէս
զի դրամական գործառնութիւնը
անգործ շահեր ձգող միջոցներով—իր
միջոցաւ շարունակուէր, հակա-
ռակ նորաչէն եկեղեցիին մէջ խոշոր
միտէր մը ունենալուն իբր հայ գա-
ւակ, նոյնպէս կային շրջիւր—եւ կը
խնայած անուանը—որք ձեռքի տակէ
քիւրտերը կը գրգռէին ընդդէմ ի-
րենց հակառակողաց եւ կը դիւրաց-
նէին անոնց կեղծքովներն ու առե-
ւանքութիւնները : Բայց մենք ամօթ
կարդալով այս վարժարաններու գը-
խուն, կը յայտնենք թէ նիթէն
տակաւ կը շեղինք եւ միայն նպա-
տակ կուենանք կոր վանեցուց տը-

գեղ մէկ էլը պարզել մինչ ներսէս
կայսկոպոսի գործերը կուզէի այդ
առթիւ ի լրջա աշխարհ բերել : Այս
կատարածին մէջ չարիքը բառնալու
համար Ասրանեան սրբազան տաճի-
րէն իօսելու եզականութեամբ եւ մա-
նուանք գիւնացիին ազդուութեամբ
նիթովը յաջողեցաւ կուսակալին
թահիր փաշայի գործակցութիւնն
ապահովել եւ խորհուրդներ տուաւ
յարդուզն ձեռնարկներու ի կայսեր-
պալատ եւ միշտ ալ զիմուել երը լսե-
լի եղան եւ սկսան շրջակոյ պէյերը
խիթալ եւ վրիժառուութեան խօսքեր
ու ցոյցեր ընել նիթաւս եպիսկոպո-
սին, բայց նա մի առ մի քաղաք բե-
րել, զոմանս նաեւ ծակը զնել տուաւ
այդ փաշաներէն զորս արհամարհ-
լով արհամարհեց եւ միայն տեղա-
կան կառավարութիւն ճանչցաւ : Եւ
բունց, Հարստահարութիւնը կարե-
լի է ըսել թէ սկսան նուազիւ եթէ
ոչ զազդել : Քիւրտերը թիւրք ու
հայ ամէն դասակարգէ հաւասարա-
պէս նախաձեռնութեան ոգի ոչ տէր
բարկարգի՝ անկեղծ ու անվախ
ճանչան գանի որուն շատ անգամ
զիմուել կընէին քան կառավարու-
թեան :

Անտառելի էր նեւսէս եպիսկո-
պոս եւ այս քան նպաստեց իր զիր-
քը բարձր պահելու եւ օգտակար ըն-
ծաւելու : Այն արհամարհանքը զոր
ցոյց կուտան նախնի Առաջնորդաց
նկատմամբ՝ շրջակայ վիճակներու
ինչպէս են Լիւթի, կոտուցի եւ վարա-
զի վանաւորութիւնը Աղթամարայ
ինքնագլուխ կաթողիկոսութիւնը եւ
Վանքայ յարակից տասնի չափ փոխ-
առաջնորդութիւնը, սեղի տուաւ
պատկառանքի եւ երկնցի : Ներսէս
սրբազանի Անապատայ ստալնորդ
Յովակի եպիսկոպոս ներկայացած ա-
սան կը զողորար պարզապէս, եւ
Աղթամարի կաթողիկոսական անգա-
պահն Արսէն ու նախկին ասալն տե-
զապահը Ստեփան վանքու սլ սմբած
կին եւ շահատակութիւններ գաղթե-
ցուցած, վասն զի Ներսէս սրբազան
կայգաւ ձեռնարկեց անապատները
ինչպէս եւ Աղթամարը պատելու եւ
սուղ ժամանակի մէջ մեծամեծ բա-
րեկարգութիւններ ներմուծելու վա-
նական՝ մատակարարական՝ երկրա-
գործական՝ կարգապահական տեսա-
կէտով : Հողոց—Վանքի վանահայրը
ներսէս վարդ, որ խաղաղիկ եղած էր
իր կրօն, ժողովի մէկ երկու անգամ
ներսէս եւ չէր կրնար Ս. ինչի որ-
բանոցին նպաստել Հ-գոյ վանքի ե-
կամուտներէն : այնչափ զիրութեամբ

բերաւ կեդրոն ի վան ոչ չարի Գանիէլ
վ. Չատուանը իր անպատկառ ու
լիրը ընթացքին համար կարգէն լու-
ծելու ազգարարութիւն ընդունեց,
չնայելով որ Աղթամարի անկախ կա-
թողիկոսութեան կը պատկանէր :
Աղթամարայ անջրդի կղզիէն փոխադ-
րել տուաւ Նարեկայ օգտուելու եւ
ջրարբի վանքը որրանոցը :

Ու այս ամէն ծառայութեանց ա-
տեն ոչ մէկէ մը 40 փարայի ժամոց
ընդունեց ու սպասեց, ոչ ալ մեծա-
մեծ զոհողութիւն ազգէն : Իր զըր-
պանը ուր միայն կը մանէր պատրի-
արքարանէ լրեն ու իր օգնականին
համար կապուած տասն օստ, օսկին,
բայ էր գրեթէ ամէն աղքատի կա-
րօնաւոր առջու : Եւ ոչորմեղու հա-
ճելի եւ օգտակար եղանակներն ինք
միայն սերտած էր :

Ինչ օգուտ, որ այս ոգուով ու այս
բազակողովանի առաւելութեամբ գոր-
ծունէութեանը երկար շրջանից վան,
զի ներսէս Արթազան իր եղբոր ժանը
հեռագրաւ իմանալով ստիպուեցաւ
Պօլս վերադառնալ անոր հաշուական
կարգ մը թնջու կընելու եւ ա-
նոր մահուամբ իր անկար եղբայրն
ու տունը՝ ամբողջ անխնամ ստոյգ
կործանմանէ մը փրկելու :
Թիւ ւաղկ հրամարական կուտար
Վանքն, սակայն քաջայայտ է այժմ
ամենուն թէ Պատրիարքարանէն ի
նպաստ վանայ կարօտելոց դրամ քա-
շելու միջոց կը ծառայեցնէր զայն եւ
ամեն անգամ ալ կը յաջողէր, վա-
սնզի եթէ այդ անապատայ գումար-
ները չըլլային, կայելի պիտի չըլլար
Հոովմէական եղբայրները քարձի
բերել :

Փուցէ այժմ Վանի մէջ հռովմէա-
կան կղեր շահուելէն եւ վանը Մու-
շի կաթողիկ Առաջնորդութեան մէկ
թեմը նկատելու լուրք կարգացողե-
րէն հեռեցնողներ ըլլան թէ Հոով-
մէականներ կան իսկապէս, ստոյգը
սա է թէ որոնք որ Հոովմէական ե-
ղած էին, վերջէն Բայժրացոյն հրա-
մանի մը վրայ իս յիսիկին պահած
են նոյնպէս Հոովմէական եւ ասոնք
հազիւ 100 հոգի կը հաշուին, մինչ
ոչ օք կայ հոովմէական զգացումով
ու կրօնով եւ ուստի մաստուրի վե-
րածուած շէնքն իսկ պարտել փոխան
գրաւուեցաւ Կաթամաճեան Մուխի
Պետրոսի կողմէ : Իսկ բողոքականե-
րն ինչ որ էին նոյնը մնացին, այսին-
քն բողոքական հաստատութիւններէն
սարդո մատի վրայ համրուած տու-
ներու մէջ եւ յուզուելի միջոցին գտած
յաւելումը՝ յուզուելի գաղարուսին եւ

(Շարունակելի)

ազդուորիս կեանք, մզիկ չի մարտ,
ինքն էլ, մի քիչ հեռուէն պակաս
լուծի միայնար զաւակի երգը եւ
մտածուել. այո, ժամանակը հասել է.
սղան կերի կը մաշի. այս ձեռն պը-
սակեմք. փառք Աստուծոյ, այս տա-
րի ալ առատ տարի է : Ու այսպէս
Քրդոյի ամբողջ կեանքը իր ամբողջ
շրջաններով անցնում են խեղճ ձե-
րուեաւ մտքով :

զրվից գերեզմանի մէջ եւ հէնց որ
քահանայի նկատման հոգի առաջին կը-
տորները զիպան զապաղին, ձերուսի
Փեռնոց ցնցվեց, ու շքի եկաւ, հա-
ճոյալի անցնել օգը ցնցվեց, նա մի
չարժոււ արաւ փոսի մէջ նեակուելու,
ա՛խ, զուակս գոչելով. բայց հայաս-
տանցի եղբայրները ամոր բունցին
ձերուսն, ան եւ քաջեցին փոսի բե-
րանից :

մտաց Շուտեանը Մի մտանար որ Գիր-
գորը զաւակներ ունի, զուսն մեղակ
չեւ, նա յիշատակ է թողել զեղ իր
զուակները՝ իր մտից ու արհեստից :
— Իս. իս. ասածը ճշմարիտ է
էֆէնաի, բայց Գրգոն ուրիշ էր : Ը-
ով գիտէ, եւ պիտի կարենամ անոր
թողած զաւակները մեծցնել : Անոնք
որ չըլլային եւ հիմա ինքզինքս ըս-
պանած էի : Ըմարիտ կասեմ. սակից
յետոյ ան պզտիկները պիտի կեանք
տան ինձի :

զերեզմանից՝ սակալով :
— Է՛հ, ալ հերիք է, Գեւոյ աղբեր
երթանք. Աստուած քեզ միտիթարէ.
ամբողջ աշխարհքի համար է՛ Նը-
թանք, տնեցիք մեզք են. անոնց
ալ պէտք է միտիթարել. եւ եթէ դու
քիչ լաւ չը պահես, կիւնք ինչ պի-
տի անեն, երթանք աղբեր. հապա
մենք ինչ անենք որ մեր զաւակներ
մեր կարօտով մեռած են : Դուսն մեզ-
մէ քաղաւոր եւ. քո ձեռքով քո զա-
ւակի աչքեր պոցեցիր :

Վերջապէս ձերուսի վանքի
գերեզմանատունը, ուր օտարական
ու խեղճ մեռելներ են թաղվում մեծ
մասամբ եւ որտեղ իրենց հանգստա-
րան են լնարել Արժուրուսին եւ Բա-
ֆին. կարծես այդ ետ ընկած ու
մոռցված մեռելների այցելուների
թիւը շատացնել տալու համար :
Դաքաղը գրին պատրաստած փոսի
մտ. քահանան վերջացրեց իր անե-
լիքը : Դեռատի երիտասարդի զիպկը

— Թողէք, ալ ինչք՞ պիտի ապ-
րիմ. թողէք, եւ ալ թաղվիմ հետը :
Օ՛խ, Փայակ, շատ անգութ ես դու,
չատ անխիղճ : Ըսենք քանդեցիր,
Օ՛Ֆ, շատ ծանր բան է եզեր զուակ
կորցնելը. գեռ քովս էր. թէ եւ մե-
ռած, բայց քովս էր : Գիւրջը քա-
նի մը անգամ ելայ երեսները հա-
րուրեցի, Երանի թէ տէրաւը չը գա-
նըլէր. այսօր ալ տունը կը մնար :
— Երթանք, գնանք հայր. միջա-

առատութեան թուականին բացումէն ետքը ինքնին պակասեցաւ և վաճը ներքէն Սրբազանի մեկնումէն ետք վերստացաւ իր սովորական տափակ և միօրինակ կեանքը:

Թէքրտաղցիք հազիւ թէ իրենց Առաջնորդը փախուցին յեղիպոսս և ահա անոր հակոտնեայ անխնու անարձաթանէր մէկը փնտրելով և հաճեցնելով ընտրեցին 1901ին ներքէն Սրբազանը յաթոռ թրակիոյ, ուր զեռ կը պաշտօնավարէ:

Անդրէանապօլսոյ կուսակալը զընահատած էր իր արժանիքը և այս օրերս արժանացաւ կայսերական գնահատութեան մը և ներքէն Սրբազան օսմանէի պատուանշանն ընդունեց իրբու հետեւանք Պատրիարքարանը և Ազգային մարմինները զո՞նք քան ըլլալուն իրեն յանձնուած ամեն պաշտօններուն մէջ և հաւաստիք մը վստահութեան անոր կարողութեանց և անձնութեան թեան առ Ազգն և առ Եկեղեցին:

Սեպտեմբեր 10 1903

ՓՈՒՔՐ ԹՂԹԱՏԱՐ

Ասկէ առաջ ըսած էի թէ եկեղեցական կալուածներու գրաման խնդիրը Ֆիլիպէի հայութեան միտքը պրաչեցնող օրուան խնդիրն է և բազմանք կայ իրեն ինկած պարտականութիւնը կատարելու, ինչ կիրպնով ալ հարկ ըլլայ:

Ետ մը ազգայիններու դիմումներուն վրայ, քաղաքիս Պատ. Մասնախումբը կը հրաւիրէր քաղաքին հայ հասարակութիւնը, ամսոյս 4ին, իր իրաւունքներուն զէմ եղած բուն բարուսին հանգէպ բողոքելու համար:

Թուան բազմութիւն մը ներկայ եղաւ որոշուած ժամուն եկեղեցւոյ շրջաբակին մէջ:

Պ. Թեւրիսան պարզեց հաւաքման նպատակը, կատարուած ուճիւրը և մեր ներկայ ու սպազայ ընելիքները:

Եւ ետքը, ի դիմաց ներկայ եղող հասարակութեան Տ. Բիւրեան և Տ. Թէլլալեան ստորագրելով բողոքագիր մը որոշուեցաւ զրկել Ամեն. կաթողիկոսին:

Հարկ չկայ պարունակութիւնը կրկնել:

Հաւաքում մը անելի տաքը նելու ազգակներ կը պակսէին միգրի գժբաղգարար: Բայց ատանկ նպատակի մը շուրջը բոլորուած ստուար հայութիւնը՝ ամէնքն ալ գոհ թողուց և գոհ մեկնեցան:

Յրուըրուած ազգերէն կիմանանք որ հոս ալ հայերու կողմէ թէեւ Մասնախումբը ըսած էր իր կողմէ՝ երեկոյթ մը պիտի տրուի ամսոյս 27ին ի նպաստ Մակեդոնացի գաղթականներուն:

Երեկոյթին զլխաւոր ոյժն է Երգեցիկ Թատր. երկսեռ խումբը որ կը մասնակցի մէկ երկու եր-

գերով և ասկէ առաջ ներկայացուցած իր յիշատակ հարսնիքն ներկայացուցով, որ այնքան չէրմ ընդունելութիւն գտած է հասարակութենէն: Երեկոյթին պարունակութիւնը կամազջացնեն պինտորական միւզիքը և Օր. Է. Խոզաթիւան գաշնակով:

Կը յուսամ թէ՛ Երգեցիկ Թատր. խումբը, ինչպէս միշտ, նոյնպէս այս անգամ՝ ջանք չի խնայել ճերմակ երես դուրս գալու համար. երբ մանաւանդ, այս անգամ հաւանական է որ օտար հասարակութիւն մըն ալ ունենանք:

Իսկ Պատ. Մասնախումբը աշխատելու է իրեն ինկած բաժինը, երեկոյթին նիւթական մասը, որքան կարելի է պարարտ ընել և 300-400 ֆրանքով մը չի գոհանալ: Մասնաւոր ջանք պէտք է թափուի տոմսակներու վաճառման:

Մնացածը ներկայացուցնեալքը:

Թղթակից

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ընդիմադիր միացեալ կուսակցութեան պետերը Պ. Պ. Կէշօֆ, Դանէֆ, Վլայքով և Թոզորով արգէն սկսած են ընտրական ճամբորդութիւնը:

Ստոյգ ազրիւրներէ կիմացուի որ պուլկար և թուրք սահմանազխուուն վրայ երկու պետութեանց զինուորներուն միջեւ ընդհարում չէ տեղի ունեցած:

Սօֆիայի քաղաքապետը Պրոկուրորին պահանջուով պաշտօնէն հեռացուած է:

Մակեդոնիայէն Սօֆիա վերադարձած է ամերիկեան թերթի մը թղթակիցը Պ. Մօր, որ չնայած թուրք կառավարութեան արգելումին, կրցած է ճամբորդել Մակեդոնիոյ մէջ ու քանի մը աներուած քաղաքներու լուսանկարները առնել:

Մակեդոնական շարժումը մի քիչ խաղաղած կերբելի. գոնէ նոր կարեւոր դէպքեր չեն պատահած: Ռուս-Աւստրիական նոր համաձայնութիւն մը կը յուսացուի մակեդոնական խնդրի կարգադրութեան համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Վիեննայէ կը հեռագրեն թէ կոմս Լամստորֆ և Կօլուխովսքի Բ. զրան յայտարարած են որ Ռուսիա և Աւստրիա համաձայնելով միւս պետութեանց հետ կը պահանջեն որ բարեկորողութիւնը գործադրուի յանձնուի բացառապէս քրիստոնեաներէ կազմուած յանձնախումբի մը:

Մոնսաթրի բանտը շարունա-

կարար պուլկարներով կը լեցուի: Բանտարկեալներուն մէջ կը գտնուին նաեւ քահանաներ:

Թուրք կառավարութիւնը պետութեանց յայտարարած է որ Մակեդոնիոյ մէջ տեղի ունեցած կոտորածներուն թուրք կանոնաւոր զօրքը մասնակցած չէ:

«Խայմզ» կը հազորդէ որ Սօֆիայի աւստրիական դեսպանի պուլկար կառավարութեան մատուցած հազորագրութիւնը Մակեդոնական կօմիւնէնրու մասին՝ գրուած է թուրք դեսպանատան մէջ:

«Խայմզ» կը հազորդէ որ Ամերիկայի և Անգլիայի մէջ թուրքիոյ անգլոսթենէն ֆլասուած Մակեդոնացիներուն օգնելու համար նպաստի կօմիտէներ կազմուած են:

Ն. Յր. Բրէսոս թերթը կը հազորդէ որ Ռուս և Աւստրիական կայսրներու տեսակցութիւնը բոլորովին փոխած չէ Մակեդոնիոյ բարենորոգման նախկին ծրագրերը:

Սելանիկէն հոկ. 2 թուականաւ կը հազորդեն թէ ապստամբներ Ռազլոկի և Ճամպայայի մէջ գոնաքի և ոստիկանական պահակատներու վրայ պոլպաներ նետած են: Զօրքերն ու ամբիւր միացած ապստամբներէն 35 հօգի սպաննած են:

Ճէմիբ հիսարի և Ճումայի միջեւ կտրուած հեռագրական թելերը նորոգուած են:

Սելանիկէն Տէտէ աղած զընացող կառավարմբը ապստամբներու ահէն ցերեկը միայն կը ճամբորդէ:

Կիմացնեն թէ Սարաֆով միացած է Յօնչէվի հետ:

ՍԵՐՊԻԱ

Նիշի մէջ գաւաղութիւն սարգոյ և դատի ենթարկուած սպաները դատապարտուած են բանտարկութեան և աստիճանազրկութեան:

ՌՈՒՄՆԻԱ

Ամէն օր Ռուսներու մէջ պուլկարներ կը ձերբակալուին. վերջին օրերս շատ մը պուլկարներ ձերբակալուած են նաեւ Պրայիլայի մէջ, որոնք կը մեղադրուին Մակեդոնական կօմիտէին գրամապէս օգնելու մէջ:

Ռուսներ կառավարութիւնը թուրք կառավարութեան պահանջած է որ բարենորոգումներու յանձնախումբին ուլաճ կարծուած մէկ անգամը փոխուի և իսկական ուլաճ նշանակուի:

ԻՏԱԼԻԱ

Պապը որոշած է ի նպաստ Մակեդոնացիներուն կօնդակ մը հրատարակել: Պապը այդ որոշումը տուած է Ֆիլիպէի կաթօլիկ Պրք. Եպիսկոպոսին թրքական գազանութիւններու մասին տուած ճանրամասն նեղեկութիւններէն զրդուելով:

ՉԻՆԱՍՏԱՆ

Ուաշինկթընի կառավարութիւնը սեղեկացած է թէ Չինկի իշխանը որոշած է մերժել Ռուսիոյ այն բոլոր առաջարկները, որոնք Մանչուրիան թողելը յետաձգելու կամ Չինու կառավարական իրաւունքներու փոխալու ընոյթը ունին:

ՃԱՐՈՆ

Բօպէէն Տէյլի Մէյլի կը հազորդեն թէ Ճարոնական կառավարութիւնը Բիուսիու կղզիէն բաւական թիւով զօրք փոխազրած է Քօրէայ և հետզհետէ ուղարկելու վրայ է:

ԹԱՏՐՈՆ ՍԱԷՏԻՆԵՆԻԷ

Նաալժտա հայ դերասանական խումբը վաղը երեկոյ պիտի ներկայացնէ ի նպաստ Մակեդոնացի գաղթականներու, խնդրանք վառնայի հայ երիտասարդութեան և Բաղաքապետի հովանաւորութեամբ:

Ալիխանգր Մակեդոնացիները Երգեր և պարեր օր. Բաթիւնայի և Օր. Օլիայի կողմէն:

Կը յուսանք որ Հայ Հասարակութիւնը չի պիտի զլնանայ իր պարտականութիւնը մասամբ կատարել զէպի մեր բաղդակից Մակեդոնացիները իր ներկայութեամբ սատարելով նիւթապէս:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒ

Սարգիս Միսոյեան 35 տարեկան (Պիթիսցի) կորվու զի դացի. 1896ին առիւն ուր գտնուիլը յայտնի չէ, իրեն ծանօթ, բարեկամ և կամ հասցէն գիտցողներ թող հաճին իմասալ:

Մարտիրոս Ռաչատուրեան (Պիթիսցի) մայ կոնս պօ, րոնչ 60, 9 ի. Ալեքիկա եւ կամ խմբագրութեանս:

ՄԱՉԻ ՆԵՐԿ

ՀՐԱՇԱԼԻ ՅԱՉՈՂՈՒԹԻՒՆ Դիւմեյ 9, Ա. Զարպիւկեանի վառեալ Պոլկարիս)

ՕՏՎՈՐՈՒՆԻԿՆ

Мурадъ-Ераносянъ

Педягичча, Взаимность «Варш